թամար թողնելով, վերադարձաւ Ս. Էջմիածին և երկու աթոռն էլ կառավարում էր։ Նորա եղերական մահն, ինչպէս երևում է վերը բերած նկատողութիւնից, Ս. Էջմիածնում պատահեցաւ և նորան դեղեցին անշուշտ իւր մերձաւորները։ Ս. Աջն Աղթամարում երկար չմնաց։ Սարգիս կաթուղիկոսն և նորա աթոռակալն Յովհաննէս (1466—1476 թ.) ուղարկեցին Աղթամար Օծոպեցի Վրթանէս եպիսկոպոսին, որը, Դաւրիժեցու ասելով, խորագէտ, գործունեայ և լեզուանի մարդ էր, և միտքը դրել էր Ս. Աջը փախցնել Աղթամարից։ Պատմում են, որ նա ծպտեալ մտաւ Աղթամար իբրև մի կաղ աշխարհական, «անգէտ գրոց և կարդալոյ», եօթն տարի այդպէս ծպտեալ ծառայեց վանքին իբրև լուսարար. և երբ եկան այնտեղ վաճառական մարդիկ մանրունք ծախելու, նա գողացաւ Ս. Աջը և խաչալամը, և պահ տուեց մի Ջուղայեցի վաճառականի, և ճանապարհ դրեց դէպի Ջուղայ։ Մի քանի օր յետոյ՝ ինքը Վրթանէս կղզուց հեռացաւ և անյայտացաւ. ոտքի արուեստական կաղութիւնը չկար այլ ևս. նա երագեց, հասաւ Ջուղայ և Ս. Աջն առնելով ճանապարհ ընկաւ դէպի Ս. Էջմիածին։ Արդէն Ջուղայից մարդ էր ուղարկել Վրթանէս և յայտնել էր Սարգիս կաթուղիկոսին Ս. Աջի վերադարձը. թէ կաթուղիկոսն և թէ շատ եկեղեցականներ և աշխարհականներ ելան դիմաւորելու Ս. Աջին։ Նախի-